

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ ժորա Ասատրյանից

Ես՝ ժորա Ասատրյանս, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունում փորձագետ աշխատում եմ 2019 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N 95 պայմանագրի համաձայն: 2019 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև 2020 թվականի մարտի 17-ը իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ԵՄ-ի կողմից Հայաստանում գենդերային զգայուն բյուջետավորմանն ուղղված տեխնիկական աջակցության՝ «Պետական ֆինանսական քաղաքականության բարեփոխման ծրագրի» շրջանակում ԵՄ փորձագետների օժանդակությամբ «Գենդերային զգայուն բյուջետային ծրագրերի սահմանման մեթոդական ձեռնարկի» մշակման աշխատանքներին:
2. Մասնակցել եմ ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակման աշխատանքներին:
3. Մասնակցել եմ ՀՀ 2021-2023թթ. ՄԺԾԾ և 2021թ. պետական բյուջեի կազմման մեթոդական ցուցումների մշակման աշխատանքներին:
4. Մասնակցել եմ ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին:
5. Կազմակերպել եմ ՀՀ 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ներառյալ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման շրջանակներում մեթոդական ցուցումների շուրջ՝ հայտատու մարմինների համապատասխան աշխատողների հետ փետրվար ամսին անցկացված սեմինար-խորհրդակցությունները:
6. Մասնակցել եմ կրթության և գիտության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի ոլորտների օրենսդրությանը վերաբերվող նախագծերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև վերջիններիս պետական ծախսերի վրա ազդեցության գնահատման աշխատանքներին:
7. Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ վարչության ընթացիկ աշխատանքներին վերաբերվող տարբեր բնույթի այլ աշխատանքներ:

Բյուջետային գործընթացի կազմակերպման
վարչության փորձագետ՝



ժորա Ասատրյան